

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.
Ֆ.Մ.ԴՈՍՏՈԵՎՍԿՈՒ ՅԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ**

Հասարակության զարգացման գործում առաջնային տեղ ունի գրականությունը, հատկապես օտար աղբյուրներից թարգմանվող գրականությունը: Գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումը մեծացնում է թարգմանական գրականության պահանջարկը: Թարգմանվող գրականությունը գրեթե նույն մշակութային դերն է կատարում տվյալ ժողովրդի համար, ինչ բնագիրը: Ն.Ի.Կոմրադը գրել է. «Թարգմանության ասպարեզում ամեն մի գրականություն անհատական և համարյա ինքնուրույն ստեղծագործություն է, որը համաշխարհային գրականության մեջ միաժամանակ հանդես է գալիս որպես ինքնուրույն բարձրարժեք ստեղծագործություն»¹: Թարգմանվող գրականության մեջ միահյուսվում են օտար և մայրենի լեզուների իմացությունը, համապատասխան հոգեբանական տրամադրվածությունը, ինչպես նաև ընդհանուր մտահորիզոնները: Հետևաբար «թարգմանական պրոցեսը կապված է լեզուների փոխադարձ համաձայնեցվածության հետ»²: Գրողի աշխարհընկալման ինքնատիպությունը, գեղարվեստական պատկերների արտահայտումը զուգադրվում է թարգմանչի լեզվամտածողության, նրա լեզվական արվեստի արտացոլման հետ:

Վերջին ժամանակներում գրականագետները մեծ աշխատանքներ են կատարում նաև թարգմանության ասպարեզում: Նրանք լեզվաբանների հետ համատեղ մշակում են մեթոդներ և եղանակներ, որոնցով փորձում են հեշտացնել թարգմանիչների աշխատանքները: Թարգմանության գործընթացում կարևոր է ծանոթ լինել այն բնագավառին, որին պատկանում է բնագիրը: Ինժեների, տնտեսագետի, գրականագետի թարգմանվող տեքստերը իրարից տարբերվում են: Գիտության ամեն մի բնագավառ ունի իրեն հատուկ տերմինաբանություն: Թարգմանության ընթացքում հնարավոր է համդիպել նոր, անծանոթ բառերի, ժարգոնային կամ բարբառային ձևերի, հնաբանությունների, օտար տերմինների: Թարգմանիչը կանգնում է դժվարին ընտրության առաջ: Ստեղծել մայրենի լեզվում տվյալ բառի համարժեքը, թե ծանոթագրությամբ բացատրել օտար բառի գործածված իմաստը: Ուշագրավ է Օրբինի համեմատությունը: Նա թարգմանությունը նմանեցնում է գեղանկարչության հետ, իսկ թարգմանչին՝ գեղանկարչի: «Գեղանկարիչը չի օգտագործում լանդշաֆտի ամեն մի մասնիկը,

¹ Н.И. Конрад, Запад и Восток, М. 1966г., стр. 460-461

² Миньяр-Белоручев Р.К., Общая теория перевода и устный перевод, М. 1980г., стр. 145

նա ընտրում է այն, ինչ իրեն քվում է լավ: Այդպես է նաև թարգմանիչը: Նա փնտրում է այն, ինչ հոգեհարազատ է իրենց, և դրանք ոչ միայն տառերն են»³:

Ինչքան էլ թարգմանիչը փորձի հարազատ մնալ բնագրին, պահպանել գրողի լեզուն ու ոճը, այնուամենայնիվ, թարգմանվող երկը որոշ չափով կտարբերվի բնագրից: Թարգմանությունը չի կարող հավասար լինել բնագրին, բայց այն պետք է թողնի այն ազդեցությունը, ինչն իր երկով ցանկացել է ասել բնագրի հեղինակը: Կարևոր է, որ պահպանվի թարգմանվող երկի գաղափարական բովանդակությունը: Այսինքն, թարգմանչի առաջնային խնդիրն է դառնում հասկանալ, փոխանցել, թարգմանել բնագիրը և ոչ թե ստեղծել նոր ստեղծագործություն, որը չունենա իր հակատիպը: Թերևս տեղին է հիշել գերմանացի գրող Գյոթեի խոսքերը. «Ինչքան էլ ասեն, թե թարգմանությունը ոչ ամբողջական է, այնուամենայնիվ, այն եղել և մնում է մարդկային փոխհարաբերության ամենակարևոր և ամենանշանակալի միջոցը»⁴:

Ինչպես նշեցինք, թարգմանությունը ոչ ինքնուրույն ստեղծագործություն է և նրա «հիմնական գիծը բնագրի հետ ունեցած կապն է»⁵: Օտար լեզվին լավ տիրապետելը դեռևս քիչ է թարգմանություն կատարելու համար: Թարգմանության գործընթացը թարգմանչին ներգրավում է մի բարդ պրոցեսի մեջ, որի կարևորագույն խնդիրն է գեղարվեստական երկի ճիշտ ընկալումն ու նրա գաղափարագեղագիտական բովանդակության վերարտադրումը:

Գրականագիտության մեջ արդեն ուսումնասիրված պատմահամեմատական մեթոդը թարգմանական վերլուծության հիմնաքարն է: Թարգմանչի համար, կարևոր է այն ժամանակաշրջանի ուսումնասիրությունը, որի ընթացքում տեղի են ունեցել բնագրում նկարագրվող իրադարձությունները: Թարգմանությունը աննպատակ չպետք է լինի, այլ հոգեհարազատ դառնա այդ ազգին և ասելու նոր քան ունենա:

Թարգմանության հարցերի և խնդիրների շուրջ կարելի է երկար գրել: Չկան որոշակի չափանիշներ կատարյալ թարգմանության համար, բայց հնարավոր է սահմանազատել հաջող թարգմանությունը անհաջողից: Յովհ. Թումանյանը գեղարվեստական թարգմանությունը մասնեցնում է ապակու տակ դրված վարդի հետ, որի ձևը երևում է, բայց բուրմունքը չես կարող զգալ: Ուրեմն մեծ շնորհք պիտի ունենա այն թարգմանիչը, որը կկարողանա ձևի մեջ ինքնուրույն բուրմունք հաղորդել, քանզի «լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության»⁶: Իսկ Գյոթեն թարգմանչին համեմատում է

³ Гачечиладзе, Художественный перевод и литературные взаимосвязи, М. 1980г., стр. 106.

⁴ Мастерство перевода, сб. 7, М. 1970г., стр. 486.

⁵ Иржи Левый, Искусство перевода, М. 1974г., стр. 217.

⁶ Ն. Թումանյան, Հ. Թումանյան և ուրիշ գրականություն, Երևան 1950թ., էջ 122:

այն մարդու հետ, ով «կարողանում է բացահայտել քողի տակ թաքնված կնոջ գեղեցկությունը, որն արժանի է սիրո և պաշտպանմունքի»⁷:

Հայերենը հարուստ լեզվական հնարավորություններ ունի և թարգմանական երկարին դարձել է անցել: Գրերի գյուտից հետո Հայաստանում զարգացում ապրեց նաև թարգմանությունը: Ժամանակի ընթացքում այն կատարելագործվեց և այսօր հայերեն թարգմանություններ են արվում աշխարհի գրեթե բոլոր լեզուներից:

Վերջերս հայ թարգմանիչները իրար ետևից թարգմանեցին և հրատարակեցին ռուս մեծ դասական Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկու ստեղծագործությունները: Ինչո՞վ էր բացատրվում Դոստոևսկու նկատմամբ հետաքրքրությունը: Արդի գրականության հիմնահարցերից է մարդու առեղծվածի բացահայտումը: Ժամանակի առումով ոչ մի գրող այնքան խորը չի թափանցել մարդկային ներաշխարհն ու փորձել բացահայտել մարդկային գոյության իմաստը, որքան Դոստոևսկին: Գրականությունը Դոստոևսկուց վերցնելով մարդու ընկալման և պատկերացման եղանակները, նոր ուղիներ է որոնում մարդկային տառապանքները վերացնելու և երջանիկ կյանք ստեղծելու համար:

Դոստոևսկու երկերին հայ ընթերցողը ծանոթ էր դեռևս XIX դ. 80-ական թթ-ից: Սակայն նրա երկերը թարգմանիչներին դժվարին հարցերի առաջ էին կանգնեցնում: Ռուս գրողը գեղագիտական ընթռնումների և կարողությունների լայն շրջանակ ունի: Նա գրել է ոչ միայն գրական լեզվով, այլ օգտվել է բարբառների և ժողովրդախոսակցական բառապաշարներից և լեզվական այլ միջոցներից՝ կերպարների լեզուն անհատականացնելու, տեղական ոճավորում և երանգավորում ստեղծելու համար: Ավելին, նա դիմել է օտարաբանությունների գործածությանը, կատարել թույլատրելի շեղումներ գրական լեզվի օրինաչափություններից: Պատահական չէ, որ արևմտահայ իրականության մեջ Դոստոևսկու երկերը թարգմանվել են ֆրանսերենից: (Լ. Բաշալյանը «Ծննդյան ծառը», «Մասիս» 1885թ. է. Օտյանը հատվածներ «Հիշատակներ Մեռյալ տնից», «Հայրենիք» 1909թ.):

Ակզբնական շրջանում հայերեն են թարգմանվում Դոստոևսկու փոքր ծավալի գործերը («Ազնիվ գող», «Հիսուսի տոնածառը», «Մեռյալ տուն»): Ավելի ուշ, 1934թ. է. Զարենցի խմբագրությամբ լույս է տեսնում Դոստոևսկու երկերի ժողովածուի առաջին հատորը, որում գետեղված էին «Խեղճ մարդիկ» (Նար-Դոսի թարգմանությամբ), «Սպիտակ գիշերներ» ու «Գեշ անեկդոտ» (Ալ. Շիրվանզադեի թարգմանությամբ) և «Խաղամուլ» (Պ. Մակինցյանի թարգմանությամբ): Խորհրդային տարիներին թարգմանվեցին նաև «Կարամազով եղբայրներ» (Կ. Սուրենյան), «Ապուշը» (Մալխասյան) և «Ոճիր և պատիժ» (Հ. Սազմանյան):

⁷ Мачтерство перевода, сд. 7, М. 1970г., стр. 486.

4.Սուրենյանը, որը շուրջ երեք տարի աշխատեց «Կարամազով եղբայրների» թարգմանության վրա, գրել է. «Թարգմանելու ընթացքը, ինքնին, երբ թափանցում ես երկի խորքերը յուրաքանչյուր բառի և նախադասության մեջ, հասկանալու երկարատև գործողություն է»⁶: Դոստոևսկին ստեղծեց գեղարվեստական մտածողության մոտ եղանակ, որով վճռական ազդեցություն գործեց ամբողջ աշխարհի գեղարվեստական մտածողության վրա: 2001թ. 4.Սուրենյանը իր «Պսակ թարգմանական» գրքում հրատարակում է Դոստոևսկու «Ծիծաղելի մարդու երազը» ֆանտաստիկ պատմվածքը, որում արտահայտված է երջանիկ մարդկության «ոսկեդարի» երազանքը: Երիտասարդ մարդու հոգեկան որոնումների ազդակը հանդիսացավ Լիլի Տեր-Մինասյանի կողմից «Դեռահասի» թարգմանությունը: Ցավոք, նա վաղաժամ հեռացավ կյանքից և չկարողացավ ավարտին հասցնել գործը: Բայց շնորհիվ Ալ.Սեխակյանի այսօր հայ ընթերցողը իր գրադարանում ունի «Դեռահասի» հայերեն տարբերակը:

Դոստոևսկու լավագույն գործերի թարգմանիչներից է նաև Արմեն Դովհաննիսյանը: Երբ նա աշխատում էր «Դևեր» վեպի թարգմանության վրա ասել է. «Դոստոևսկուն անդրադառնալը, հատկապես «Դևերին», ժամանակի պահանջ էր, որովհետև դա դասագիրք է բոլոր տեսակի «հեղափոխականների» համար»: Երկար ժամանակ «Бесы»-ին հայ մտավորականները թարգմանում էին չարքեր: Ա.Դովհաննիսյանը «դևեր» բառը համարժեք է համարում Դոստոևսկու բնաբանին: Ռուս գրողը վեպի սկզբում երկու բնաբան ունի՝ Պուշկինից և Աստվածաշնչից, որոնցում խոսվում է դիվական երևույթների մասին:

Թարգմանիչը հեղինակի միջնորդն է, որը պետք է կարողանա համադրել տեքստերը, ունենալ տեքստային զգացողություն: 2005թ. «Դևերի» հետ Արմեն Դովհաննիսյանը թարգմանեց և տպագրեց «Գրառումներ Մեռյալ տնից» գիրքը: Նրա թարգմանությունները առանձնահատուկ են նրանով, որ թարգմանիչը գրքերի վերջում ունի ծանոթագրություններ: Քանի որ «Գրառումներ Մեռյալ տնից» գիրքը Սիբիրի տաժանապարտների մասին է, գրողը օգտագործել է նաև ժարգոնային բառեր: Դրանց համարժեքները թարգմանիչը տալիս է նրբորեն: Ահա մի քանի օրինակ.

- «փոխեին ճակատագիրը» (էջ 97) - բանտային ժարգոնով նշանակում է փախուստ բանտից, տաժանավայրից.
- «... մածունն է կերել» (էջ 31) - բանտային ժարգոնով նշանակում է փախել է բանտից և տեղնուտեղ բռնվել»⁷:

Թարգմանության ընթացքում հանդիպում ենք դարձվածքների, ասացվածքների, որոնք արտահայտում են տվյալ ժողովրդի դարավոր

⁶ 4.Սուրենյան, Ոգու ամբողջություն, Երևան 1982թ., էջ 502:

⁷ Ֆ.Մ.Դոստոևսկի, Գրառումներ Մեռյալ տնից, թարգմ. Ա.Զովհաննիսյանի, Երևան 2005թ.

կենսափորձն ու լեզվամտածողության ինքնատիպությունը: Թարգմանիչը ընտրում է հայերենում դրանց համարժեքները: Սիա դարձվածքներ՝.

«... Да после отца — то все поремили, потому я тоже закурил, братец ты мой: (стр. 168)¹⁰:

«... բայց հորիցս հետո ամեն հմտ քամուն տվեցի, քանի որ ես էլ հմտ հսկեցի խմիչքի, ախպորս ասեմ» (էջ 259)¹¹:

«Да ведь не женился. Дверь указали, беден значит: (стр. 184) .

«Այր չպսակվեց՝ դուռը քրին փակեցին, ուրեմնս՝ չունևոր ես» (էջ 278):

Սիա ասացվածքների մի քանի օրինակ.

«Ворон ворону глаз не выклюет:(стр.179).

«Շունը շան թաթ չի կծի» (էջ 277).

«Черного кобеля не отметишь добела: (стр 181).

«Կարմիր կովն իր կաշվից դուրս չի գա»(էջ 280):

Մեր թարգմանիչները ելնելով ժամանակի պահանջից, հաջողությամբ իրագործեցին դժվարին ու մեծ առաքելությունը՝ հայ ընթերցողի գրադարանը հարստացնելով Ղոստոնակու անմահ քերթվածներով: Թարգմանիչների աշխատանքները ինքնատիպ են, բազմաբնույթ, բայց բոլորն էլ առաջնորդվել են հիմնական նպատակով՝ վերարտադրել բնագրի գաղափարագեղագիտական բովանդակությունը:

¹⁰ Достоевский, Собр соч. в 30-ти томах, Т. 4, А. 1972г. (էջերը նշված են յուրաքանչյուրի կողքին)

¹¹ Ղոստոնակի, Գրառումներ Մեռյալ տնից, թարգմ. Ա.Հովհաննիսյանի, Երևան 2005թ.: